

Պետրոս իր պալատականներէն իմանալով Կոստանդին Գ-ի մահը, պալատին յանձնարարականները դրականը դրած՝ փութաց զէպի Կիպրոս, ուր հասաւ Կոստանդին Գ-ի գահակալութեան առաջին տարւան վերջերը. բայց մեծ եղաւ զարմանքը, երբ իմացաւ որ հայկական գահին վրայ ա՛յն պիտի յաջորդ մը զրուած է, որ ոչ թէ միայն կիպրացի է, այլ եւ ցանկութիւն ունի գահն իրե՛ն յանձնելու: Ուստի Պետրոս հեաք բերած յանձնարարականները բոլորովին ծածուկ պահեց ամենքէն, որպէս զի զիւրութեամբ հասնի իր նպատակին: Եւ իրօք ալ՝ Կոստանդին Գ չկրնալով զիմանալ ներքին խռովութիւններու եւ մանաւանդ արտաքին յարձակումներու, Պետրոսը հրաւիրեց զալ գրաւել Հայոց գահն ու գանձը, իրեն հանգըստութեան համար ալ Կիպրոսի մէջ ապահով տեղ մը խնդրելով(1): Բայց ո՛չ Պետրոս եւ ո՛չ Կոստանդին չհասան իրենց նպատակին. վասն զի, ինչպէս վերն (եր. 22) ըսի, ճանքաներու բռնուած ըլլալուն պատճառով կարելի չէր ցամաքի եւ ծովի յարաբերութիւնները շարունակել: Այս անկէ զրուութիւնն ազատուելու համար Պետրոս եւ Կոստանդին գաղանի ժամադրութիւն մը սարքեցին, որպէս զի որոշեալ օր մը երկուքը մէկէն երկու հակառակ

2. Ալիւան կրօն, քե « ըստ ոմանց Լեւոն ոմն կորգէ զբագն, այլ խոսեալ 'ի բաց մերժի » . եւ ծանօթութեան մեջ ալ Աւետիք Ամուկեցիին կործնակի հետեւեալը . « Եղեւ քաղաւոր Լեւոն մ'այլ, խոչընդակ Կոստանդեայ, եւ խռովութիւն ոչ սակաւ ընդ միմեանս », (*Սխուման*, եր. 544 եւ 560), առանց սակայն սրտելու քե ո՛վ էր այս « ոմն » Լեւոնը: Ալիւանի այս տղերէն կը հետեւի, քե ինքը չընդունիր Կոստանդին Գ-ի որդին ըլլալը, մանաւանդ որ նոյն զբիւն մեջ (եր. 560) կը գրէ . « 1357 Սրածութիւն 'ի Սիս. բազում պարոնայք եւ քահանայք եւ արքայորդիք մեռանին » . իսկ ուրիշ տեղ ալ (*Հայ-Վեհեք*, եր. 131) բացարձակ կերպով կրօն . « (Կոստանդին) կու մեռնէր 1363 քուականին՝ յորդով ժառանգ առու. վասն զի իր երկու որդեակին, Օւին եւ Լեւոն, ապագայ մասալ յոյս Հայոց, հօրերնուն աչիքն առջեւ մեռած էին: » Բայց Դարդել ընդունելով հանդերձ քե Կոստանդինի որդիները մեռած էին, կրօն քե « էին նորա որդիք բազումք » (եր. 58). ուրեմն Կոստանդին « երկու որդեակին » միայն չէին զոհուած կոստանդին, այլ « բազումք », որոնց մեջէն նորայրած կապրէր ահեւս Լեւոն: Երբ վերը (եր. 24, ծան. 1) Մաքեդոնի յիշած Լեւոնին քուականը (1360) համեմատենք այս Լեւոնի իշխանութեան քուականին հետ (1363), մի եւ նոյնը կը գտնենք, երեք տարի տարբերութիւնով միայն:

(1) Դարդել, եր. 59.